

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

«28» օգոստոս 2020թ.

No 2936 - Լ

«ԴԻԱՍԵՊՏԻԿ 70» ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ԱՐԱԳ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Դիասեպտիկ 70» մակերեսների արագ ախտահանման ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի  
2020թ. օգոստոսի 28-ի  
2936 - Լ հրամանի

## ՀՐԱՀԱՆԳ

### «ԴԻԱՍԵՊՏԻԿ 70» ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ԱՐԱԳ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Դիասեպտիկ-70» մակերեսների արագ ախտահանման ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է թափանցիկ, համասեռ, ներկված կամ չներկված հեղուկի տեսքով, սպիրտի և/կամ բուրանյութի յուրահատուկ հոտով կիրառման համար պատրաստ լուծույթ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է իզոպրոպիլ սպիրտ՝ 70,0%, ունդեցիլ ամիդոպրոպիլ տրիմոնիում մետոսուլֆատ՝ 0,23%, 2-ֆենօքսիէթանոլ՝ 0,30%, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,10%, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ բաղադրիչներ:

2. Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի չբացված բնօրինակ փաթեթավորմամբ՝ 5 տարի է: Միջոցը թողարկվում է 0,03-ից մինչև 2 դմ<sup>3</sup> տարողությամբ պոլիմերային առանց պրոպելենտի սրվակներով, հագեցած դոզավորող, այդ թվում փրփուրառաջացնող կամ ցողացրող գլխադիրներով, պտուտակավոր կափարիչներով, 1-ից մինչև 50 դմ<sup>3</sup> տարողությամբ կանիստրներով, 50-ից մինչև 200 դմ<sup>3</sup> տարողությամբ պոլիմերային տակառներով կամ սպառողի համար ընդունելի և արտադրանքի անվնասությունն ապահովող ցանկացած այլ տարայով: Միջոցը կարող է օգտագործվել փաթեթավորման հերմետիկությունն ապահովող կափարիչներով ապահովված դիսպենսերների մեջ ոչ գործվածքային անձեռոցիկները տոգորելու համար (SU «Դեզիբոքս»): Միջոցի ծախսը ոչ գործվածքային անձեռոցիկների տոգորման համար պետք է կազմի առնվազն 1,5 գրամ միջոց 100 սմ<sup>2</sup> անձեռոցիկի նյութի համար:

3. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչը՝ թեստավորված *M.terrae*-ի վրա, բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՊՎ) հարուցիչները՝ թեստավորված *P.aeruginosa*-ի վրա), վիրուսների՝ ընդերային և արտաընդերային Ա, Բ, Ց, Դ հեպատիտների, ՄԻԱՎ հարուցիչների, ցիտոմեգալովիրուսի, հերպեսի վիրուսների, գրիպի վիրուսների (այդ թվում «թռչնի», «խոզի»), պարագրիպի, ադենովիրուսների, ռոտավիրուսների, նորովիրուսների, էնտերովիրուսային վարակների՝ պոլիոմիելիտի, Կոքսակի, ECHO, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսների, ՄՇՎՀ հարուցիչների, Կանդիդա ցեղի սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ:

4. Միջոցն օժտված է ճարպագերծող և դեզոդորացնող հատկություններով, երկարացված 3 ժամ տևողությամբ հակամանրէային ազդեցությամբ: Նախատեսված է իզոպրոպիլ սպիրտի նկատմամբ կայուն ցանկացած նյութերի, ինչպես նաև ապակյա, այդ թվում հայելային մակերեսների, սպիտակուցային (այդ թվում հնացած արյունով), ճարպային, մթնոլորտային, փոշային կամ կոմբինացված աղտոտվածություններով մակերեսներով օբյեկտների մշակման համար: Օժտված չէ ամրացնող ազդեցությամբ:

5. Միջոցը, ըստ սուր թունավորության չափանիշների, ստամոքս ներմուծելիս և մաշկի վրա լցվելիս, ըստ ԳՈՍՏ 12.1.007-76, պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին, որովայնամզի վրա ազդելիս՝ պատկանում է քիչ թունավոր նյութերի 4-րդ դասին՝ ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման, չի ցուցաբերում գրգռող ազդեցություն չվնասված մաշկի վրա և առաջացնում է աչքերի լորձաթաղանթի գրգռում, ներշնչական (ինհալյացիոն) վտանգավորության աստիճանով միջոցը պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին, կիրառման առաջարկվող ռեժիմներով օժտված չէ մաշկային-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցությամբ: Աշխատանքային գոտու օդում սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) իզոպրոպիլ սպիրտի համար՝ 10 մգ/մ<sup>3</sup> է (գոլորշիներ), չորրորդային ամոնիումային միացությունների (ՉԱՄ) համար՝ 1 մգ/մ<sup>3</sup>, 2-ֆենօքսիէթանոլի համար՝ 2 մգ/մ<sup>3</sup>:

6. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում<sup>1</sup> (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն), տարբեր

---

<sup>1</sup> Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ ցանկացած ուղղվածության (այդ թվում մանկաբարձ-գինեկոլոգիական, ատամնաբուժական, վիրաբուժական, մաշկա-վեներաբանական,

ուղղվածության հիմնարկներում և հաստատություններում<sup>2</sup>, այդ թվում կենցաղում, որպես միջոց տարբեր օբյեկտների և ոչ մեծ մակերեսներով մակերևույթների արագ ախտահանման համար, այդ թվում.

1) Կոշտ և փափուկ գույքի, այդ թվում վինիլիսկաշվով երեսապատված, գործողությունների, բժշկական, բարուրասեղանների, սեկցիոն սեղանների, կահավորանքի պարագաների, լուսավորող սարքավորումների և սարքերի, մանրէասպան լամպերի, բժշկական սարքերի և սարքավորումների մակերեսների (այդ թվում կուլեգների, արհեստական շնչառության սարքերի, անեսթեզիոլոգիական սարքերի, օպտիկական սարքերի, մամոգրաֆների, ֆոնենդոսկոպների, ախտորոշիչ

---

մանկաբուժական, բուժակ-մանկաբարձական): հիվանդանոցներ (այդ թվում մանկական, մասնագիտացված և շտապ բժշկական օգնության, ուռուցքաբանական կենտրոններ և բաժանմունքներ), օրգանների փոխպատվաստման կենտրոններ, հեմոդիալիզի բաժանմունքներ, ծննդատներ (այդ թվում նեոնատոլոգիայի և արտամարմնային բեղմնավորման բաժանմունքներ, մանկական բաժանմունքներ), հոսպիտալ, բուժսանմաս, բուժքույրական խնամքի տներ, բժշկա-սոցիալական հաստատություններ (հոսպիտալ), պալիատիվ բժշկության բաժանմունքներ և հաստատություններ, բորոտանոց, դիսպանսերներ (այդ թվում մաշկա-վեներաբանական և հակատուբերկուլոզային), ամբուլատորիա, պոլիկլինիկա, այդ թվում մանկական, կանանց կոնսուլտացիա, մանկան տներ, կաթնախոհանոցմասնագիտացված (պրոֆիլային) և մանկական կենտրոններ (այդ թվում օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաների, խորհրդատվական-ախտորոշիչ, պերինատալ), բժշկական կազմակերպություններ՝ շտապ բուժօգնության և արյան փոխներարկման (շտապօգնության, արյան փոխներարկման կայան, արյան կենտրոններ), առողջարանա-կուրորտային կազմակերպություններ (բուժական, կուրորտային պոլիկլինիկականներ, առողջարաններ, այդ թվում մանկական, առողջարան-պրոֆիլակտորիա, առողջարանային և առողջարարական ճամբարներ), հատուկ տեսակի բժշկական կազմակերպություններ (այդ թվում սղետների բժշկության, ոգմա-բժշկական փորձաքննության, դատա-բժշկական փորձաքննության, բժշկա-սոցիալական փորձաքննության, ախտաբանասատմիական (դիախերձարան) փորձաքննության կենտրոններ, սանիտարական տրանսպորտ, կլինիկական-ախտորոշիչ, միկրոկենսաբանական, մանրէաբանական (այդ թվում տուբերկուլոզի ախտորոշման) լաբորատորիաներ, ինչպես նաև տարբեր ենթակայության այլ պրոֆիլային լաբորատորիաներ, հսկողություն իրականացնող բժշկական կազմակերպություններ՝ սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության ոլորտում (այդ թվում հիգիենայի և համաճարակաբանության, ախտահանման կենտրոնները և կայանները, սանթոդարանները), հավաստագրով մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց հիմնարկներն ու կազմակերպությունները, վարակի օջախներ, տեխնածին և բնական արտակարգ իրավիճակների գոտիներ:

<sup>2</sup>Սոցիալ-մշակութային, սպասարկման ոլորտի, մարզա-առողջարարական նշանակության կազմակերպություններ (այդ թվում վարսավիրական և կոսմետոլոգիական ծառայություն մատուցող, մերսման սենյակ, ՍՊԱ-պրահ, հյուրանոց, հանրակացարան, պանսիոնատ, հանգստյան տուն, թատրոն, կինոթատրոն, ակումբ, զվարճանքի կենտրոն, բաղնիք, շոգեբաղնիք, լվացքատուն, քիմնաքրում, լողավազան, ակվապարկ, մարզահամալիր, ֆիթնես կենտրոն, զանգվածային սպորտային միջոցառումների անցկացման վայրեր, սոլյարի, հասարակական զուգարան), սոցիալական ծառայություն մատուցող հաստատություններ (այդ թվում տարեցների, հաշմանդամների, մանկան, գիշերային կեցության տներ, ինտերնատ, անչափահասաների սոցիալ-վերականգնողական կենտրոն, ապաստան), քրեակատարողական հիմնարկներ, արդարադատության մարմիններ և հիմնարկներ, ռազմական կազմակերպություններ, այդ թվում ուժային գերատեսչությունների, ԱԻՆ, ԱԱԾ, ՆԳՆ ենթակառուցվածքներ, զինված ուժերի և ոստիկանական զորքերի զորամասեր և հաստատություններ, կրթական հաստատություններ (այդ թվում նախադպրոցական), մարզադպրոցներ, ադմինիստրատիվ և գրասենյակային հաստատություններ, ֆինանսավարկային կազմակերպություններ, այդ թվում բանկ, տրանսպորտի օբյեկտներ (այդ թվում հասարակական, երկաթուղային, ցամաքային, ջրային, մետրոպոլիտենի, սննդամթերքի տեղափոխման, բեռնատար), օդանավակայան, կայարան, հանրային սննդի և առևտրի օբյեկտներ, սննդի արտադրություններ, արդյունաբերական և մթերային շուկաներ, պահեստներ և պահոցներ, դեղագործական և դեղատնային կազմակերպություններ, քիմիա-դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության, օժանելիք-կոսմետիկական հիմնարկներ, իմունակենսաբանական պատրաստուկների իրացմամբ զբաղվող կազմակերպություններ, բուսաբուծությամբ զբաղվող հիմնարկներ ու կազմակերպություններ (տնկարան), թռչնաբուժական ու կենդանաբուժական տնտեսություններ, անասնաբուժարաններ, անասնաբուժական հսկողության այլ օբյեկտներ:

սարքավորումների, այդ թվում ուլտրաձայնային հետազոտության (ՈւՁՀ), տվիչների և գլխադիրների, կարդիոէլեկտրոդների), ֆիզիոթերապևտիկ սարքավորման, բարոխցերի, գինեկոլոգիական բազկաթոռների, բազկաթոռների գլխակալների և արմնկակալների, սայլակների, պատգարակների, հենակների, դռների և պատուհանների բռնակների, բազրիքների, անջատիչների, շերտավարագույրների, դեկորատիվ պանելների (էկրան), ջեռուցման համակարգի խողովակաշարերի վրա և այլն,

2) Բժշկական նշանակության արտադրատեսակների, այդ թվում ատամնաբուժական գլխադիրներ և ատամնաբուժական նյութեր (ատամնապրոթեզային կիսահումքեր, ալգինատային, սիլիկոնային, պոլիէթերային արտատպվածքներ),

3) Հոգնայի գլխադիրների,

4) Ասեպտիկ պայմանների պահպանում պահանջող տարբեր ուղղվածության հաստատությունների և կազմակերպությունների աշխատողների կրած ձեռնոցների, կրած և կենսաբանական արտադրություններով, այդ թվում արյունով, աղտոտված ձեռնոցների՝ դրանց օգտահանումից առաջ,

5) Կլինիկա-ախտորոշիչ, մանրէաբանական և այլ լաբորատորիաների սարքավորումներ,

6) Իմերսիոն յուղերից ու ներկերից մանրադիտակների առարկայական ապակիների մաքրման համար,

7) Տարբեր ուղղվածության կազմակերպությունների սարքավորումների մակերեսների,

8) Հիվանդի խնամքի պարագաների, պոլիուրետանային ծածկույթով ներքնակների, ջերմաչափերի,

9) Պլաստիկից, ապակյա, մետաղյա խաղալիքների,

10) Ռետինե, պլաստիկե, պոլիպրոպիլենային գորգերի,

11) Կաշվե, կաշվի փոխարինիչներից կոշիկների, ռետինե և պոլիմերային հողաթափերի ներքին մակերեսների՝ սնկային հիվանդությունների կանխարգելման նպատակով,

12) Սանիտարա-տեխնիկական սարքավորման (այդ թվում ջրմուղի ծորակների, դռների բռնակների և փականների, իջեցման բռնակների և այլ մակերեսների, որոնց մարդիկ ձեռքով դիպչում են զուգարանից օգտվելու ժամանակ),

- 13) Մարզագույքի, այդ թվում սպորտով զբաղվելու գորգերի,
- 14) Հեռախոսափողի և օրգտեխնիկայի արտաքին մակերեսների (բացառությամբ հեղուկ-բյուրեղային՝ LCD (Liquid Cristal Display) մոնիտորները և էկրանները), հաշվիչ-դրամային սարքավորումների, բացառությամբ LCD էկրանների մակերեսները, տարբեր այլ շփումային մակերեսների,
- 15) Տրանսպորտային միջոցների, այդ թվում շտապ և անետաձգելի բուժօգնության, սանիտարական տրանսպորտի, փաթեթավորված և չփաթեթավորված սննդամթերքի տեղափոխման, հանրային և բեռնատար տրանսպորտի, կենդանիների տեղափոխման տրանսպորտի, տրանսպորտային ենթակառուցվածքների (ուղևորների նստելատեղեր, այդ թվում խավ ունեցող գործվածքով երեսապատված նստելատեղեր, խորշեր, բեռների դարակներ, բազրիքներ, սենքի հատակ և պատեր (մինչև 10 մ<sup>2</sup> մակերեսով), դարակներ և դարակաշարեր և այլն) դժվարհասանելի, միջին և փոքրածավալ մակերեսների,
- 16) Արևայրուքի (սոլյարիի) խցիկների, ներառյալ լամպերը, ոչշփումային մերսման, հիդրո- և բալնեթերապիայի լոգարանների, ՍՊԱ-պատիճների, գալվանական լոգարանների մակերեսների և այլն,
- 17) Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների սենքերում մակերեսների. կոշտ և փափուկ գույքի, մերսման և կոսմետոլոգիական թախտերի, բազկաթոռների, պահարանների, սայլակների, ապարատային կոսմետոլոգիայի սարքավորումների (ֆոտոթերապիայի, դաջվածքների լազերային հեռացման, մաշկի ռադիոհաճախականության լիֆտինգի, հարվածա-ալիքային թերապիայի, վակուումա-անիվային մերսման, կավիտացիայի, լազերային մազահեռացման և այլն), մատնահարդարման և ոտնահարդարման գործիքների (խարտոց, կրունկների մաքրման էլեկտրական և ձեռքի սարքեր), վարսահարդարման պարագաներ և սարքեր (այդ թվում սանր, ածելի, տրիմմեր),
- 18) Մակերեսների և օբյեկտների, այդ թվում հանրային սննդի, սննդի և վերամշակման արդյունաբերության, պարենային առևտրի կազմակերպությունների արտադրական սենքերում. կոշտ գույքի, տեխնոլոգիական և կշռման սարքավորումների, արտադրական սեղանների, փաթեթավորման գծերի և չափածրարման ագրեգատների, սննդամթերքի կտրատման սարքերի, այդ թվում հացի կտրատման սարքերի, սայլակների, փոխակրիչների, սառնարանային և սառցարանային սարքավորումների, դեֆրոստերների, գույքի, այդ թվում մասնատման,

սկուտեղների, տեփուրների, դարակաշարերի, ցուցափեղկերի, վաճառասեղանների և այլն,

19) Ջերմոցների և ջերմատների արտաքին և ներքին մակերեսների, այգեգործական գույքի,

20) Կրոնապաշտական պարագաների և պատկանելությունների, աղոթքի սենքերում եկեղեցական իրերի, այդ թվում բժշկական կազմակերպություններին կից,

21) Աղբահավաքման տեղերի (բաք, դույլ՝ թափոնների հեռացումից հետո) և փոքր ծավալով մետաղյա ու պլաստիկ աղբահավաքման պարագաների ախտահանման, մաքրման և դեզոդորացման համար,

22) Բորբոսով ախտահարված օբյեկտների մշակման համար,

23) Հիմնական մաքրում իրականացնելու համար,

24) Մակերեսների ախտահանման նպատակով հատուկ դիսպենսերների մեջ ոչ գործվածքային չոր անձեռոցիկների տոգորման համար,

25) Շտապօգնության մեքենաները ապահովելու համար:

## **2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ**

7. Տարբեր վարակների ժամանակ սույն հրահանգի 6-րդ կետում ներկայացված օբյեկտների և մակերեսների ախտահանումն իրականացվում է շփման կամ ոռոգման եղանակով, կախված նրանց մակերեսից և ձևից՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Կանխարգելիչ ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 2-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

8. Միջոցի ծախսը շփման և ոռոգման ժամանակ կազմում է առնվազն 30 մլ 1 մ<sup>2</sup> մշակվող մակերեսի համար: Միաժամանակ մշակման ժամանակ մակերևույթի առավել թույլատրելի մակերեսը պետք է կազմի սենքի ընդհանուր մակերեսի 1/10-ից ոչ ավելի:

9. Կենսաբանական, սննդային, մթնոլորտային կամ կոմբինացված նստվածքներով, բնական և սինթետիկ յուղերով ու ճարպերով չաղտոտված սույն հրահանգի 6-րդ կետում նշված օբյեկտներն ու մակերեսները շփում են միջոցով թրջված անձեռոցիկով կամ ոռոգում միջոցով՝ ցողացրիչով տարայից, մինչև ամբողջությամբ թրջվելը:

Ախտահանման պահաժամից հետո (տե՛ս աղյուսակներ 1, 2) միջոցի մնացորդները մակերեսից հավաքվում են չոր անձեռոցիկով:

10. Մշակվող օբյեկտների մակերեսների վրա աղտոտվածության առկայության դեպքում սկզբում միջոցով թրջված անձեռոցիկով դրանք հեռացվում են, այնուհետև իրականացվում է ախտահանում: Հանրային սննդի կազմակերպություններում, տարբեր հաստատությունների և կազմակերպությունների խոհանոցային կառուցահատվածներում, սննդի և վերամշակման կազմակերպություններում հատուկ ուշադրություն է դարձվում ախտահանման ենթարկվող մակերեսների վրա սննդային աղտոտվածությունների առկայությանը. խոշոր աղտոտվածությունը հեռացվում է մեխանիկորեն, սննդամթերքի և մթերային հումքի հետ շփվող և չշփվող խիստ աղտոտված մակերեսների վրա (մաքումը) իրականացվում է հատուկ այդ նպատակների համար նախատեսված վացող միջոցներով: Աղտոտվածություններից մաքրված մակերեսները վանում են, չորացնում և այնուհետև ախտահանում միջոցով ոռոգման կամ շփման եղանակով: Ոռոգման եղանակով միջոցն օգտագործելուց առաջ թույլ չտալ, որ այն ընկնի մթերային հումքի, մաքուր սպասքի, սեղանի պարագաների, մթերային սարքավորումների, սննդամթերքի և այլն վրա:

11. Ախտահանումից հետո միջոցի վացում մակերեսից չի պահանջվում, բացառությամբ սննդամթերքի, մթերային հումքի և լորձաթաղանթի հետ անմիջական շփում ունեցող մակերեսների:

1) Սննդամթերքի, մթերային հումքի և լորձաթաղանթի հետ շփվող օբյեկտների մակերեսները ախտահանման պահաժամից հետո վանում են հոսող ջրով կամ շփում ջրով առատ թրջված խոնավ անձեռոցիկներով:

2) Կուլեզների մակերեսները ախտահանման պահաժամից հետո կրկնակի շփում են մանրէազերծ ջրով առատ թրջված մանրէազերծ անձեռոցիկներով, այնուհետև մանրէազերծ տակաշորով կամ անձեռոցիկով սրբում մինչև չորանա:

12. Բժշկական նշանակության արտադրատեսակները, այդ թվում ատամնաբուժական գլխադիրները, արտատպվածքները, ատամնապրոթեզային կիսահումքերը, ասեղները, ախտահանում են շփման, ոռոգման կամ լուծույթի մեջ ընկղմման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

13. Կաշվե կոշիկների ներքին մակերսը մանրակրկիտ շփում են միջոցով առատ թրջված անձեռոցիկներով կամ խծուծներով, և թողնում չորանա: Կաշվեփոխարինիչներից կոշիկների, ռետինե և պոլիմերային հողաթափերի ներքին և արտաքին մակերեսները առատ ոռոգում են միջոցով կամ շփում լավ խոնավացված անձեռոցիկներով: Ազդեցության ժամանակը՝ 30 վայրկյան: Նշված ժամանակից հետո միջոցի մնացորդները հավաքվում են չոր անձեռոցիկով: Շփման եղանակով կոշիկի մշակման ժամանակ կոշիկի յուրաքանչյուր զույգի համար օգտագործվում է առնվազն երկու անձեռոցիկ:

14. Իմերսիոն յուղից և ներկերից մանրադիտակների առարկայական ապակիների մաքրումը, կախված աղտոտվածության աստիճանից և քանակից, իրականացվում է ընկղմման ավազանի մեջ՝ ոռոգման կամ ընկղմման եղանակով: Մաքրումից հետո ապակիները ենթակա են ջրով լվացման:

15. Պոլիպրոպիլենային, պլաստիկ գորգերը, մարզագորգերը հավասարաչափ ոռոգում են միջոցով կամ շփում միջոցով առատ թրջված անձեռոցիկով, խծուծով: Ազդեցության ժամանակը՝ 30 վայրկյան: Ջրով լվացում չի պահանջվում:

16. Ռետինե, մետաղյա, պլաստմասե խաղալիքներն ախտահանում են ոռոգման կամ շփման եղանակով, հաջորդող ջրով լվացումով: Խոշոր խաղալիքները թույլատրվում է շփել ջրով առատ թրջված անձեռոցիկով:

17. Հիվանդի խնամքի ռետինե, ապակյա, պլաստմասե պարագաները, կախված չափից և ձևից, ախտահանում են ընկղմման, շփման կամ ոռոգման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Անջրաթափանց պոլիուրետանային ծածկույթներով ներքնակերեսների մակերեսները շփում են միջոցով առատ թրջված անձեռոցիկներով՝ 15 վայրկյան ազդեցության ժամանակով: Ներքնակերեսի մակերեսին կենսաբանական արտադրությունների առկայության ժամանակ մշակումն իրականացվում է կրկնակի՝ նախ հեռացնում են աղտոտվածությունը միջոցով առատ թրջված անձեռոցիկով, այնուհետև ախտահանում մակերեսը:

18. Ասեպտիկ պայմանների պահպանում պահանջող կազմակերպություններում անձնակազմի կրած ձեռնոցների մակերեսը, ինչպես նաև կենսաբանական արտադրություններով, այդ թվում արյունով, աղտոտված ձեռնոցների ախտահանման համար մշակում են միջոցով առատ թրջված անձեռոցիկով, թանգիլե կամ բամբակյա

խծուծով շփման եղանակով: Ազդեցության ժամանակը սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված տվյալներին համապատասխան:

19. Սանիտարա-տեխնիկական սարքավորումների շփումային մակերեսները, այդ թվում դռան բռնակներ և փականներ, իջեցման բռնակներ, զուգարանակոնքի օղագոտի և այլ մակերեսներ, մանրակրկիտ շփում են միջոցով առատ թրջված անձեռոցիկով, դժվարհասանելի մակերեսները մշակում ոռոգման եղանակով: Ազդեցության ժամանակը 30 վայրկյան է: Զուգարանակոնքի օղագոտին ախտահանումից հետո ենթակա է ջրով լվացման կամ ջրով առատ թրջված անձեռոցիկով շփման:

20. Հիմնական մաքրում իրականացնելու համար ախտահանման ռեժիմը որոշվում է կազմակերպության ուղղվածությամբ:

21. Բորբոսասանների դեմ պայքարի համար օբյեկտները նախ մանրակրկիտ մաքրում են խոզանակով կամ սպունգով, այնուհետև կրկնակի 1,5 րոպե ընդմիջումով ոռոգում են միջոցով, հետագա՝ 1,5 րոպե ազդեցության պահաժամով:

Աղյուսակ 1

**Տարբեր մակերեսների և օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով տարբեր վարակների ժամանակ**

Ախտահանման օբյեկտ	Վարակի տեսակ	Ախտահանման ժամանակ	Ախտահանման եղանակ
Ոչ մեծ մակերեսով մակերևույթներ, սենքերում օբյեկտներ, կոշտ և փափուկ կահույք, սարքեր, սարքավորումներ, կուվեզներ, տեխնոլոգիական սարքավորումներ և	Մանրէային (բացառությամբ բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների տուբերկուլոզի), սնկային (Կանդիդա)	15 վայրկյան	Շփում, ոռոգում
	Բժշկական միջամտություններով	30 վայրկյան	

այլն ըստ սույն հրահանգի 6-րդ կետի (աղտոտված մակերեսները նախօրոք մաքրվում են)	պայմանավորված վարակներ, Սնկային (դերմատոֆիտներ)		
	Տուբերկուլոզ (M.terrae)	1,5 թուպե	
	Վիրուսային	1 թուպե	Շփում
Բժշկական նշանակության արտադրատեսակներ՝ մետաղյա, ռետինե, պլաստմասե, ապակյա	Մանրէային, այդ թվում ԲՄՊՎ (բացառությամբ տուբերկուլոզի), Սնկային (Կանդիդա, դերմատոֆիտներ)	30 վայրկյան	Շփում, ընկղմում, ռոռզում
	Տուբերկուլոզ (M.terrae)	1,5 թուպե	Շփում, ընկղմում
	Վիրուսային	1 թուպե	
Ատամնաբուժական գլխադիրներ	Մանրէային (բացառությամբ ԲՄՊՎ և տուբերկուլոզի), սնկային (Կանդիդա)	15 վայրկյան	Շփում
	ԲՄՊՎ	30 վայրկյան	
Ատամնաբուժական արտատպվածքներ (ալգինատային, սիլիկոնային, պոլիէթերային), ատամնապրոթեզային կիսահումքեր (մետաղ, կերամիկա, պլաստմաս)	Մանրէային (բացառությամբ ԲՄՊՎ և տուբերկուլոզի), սնկային (Կանդիդա)	15 վայրկյան	Ռոռզում
	ԲՄՊՎ	30 վայրկյան	
Ձեռքերին կրած ռետինե ձեռնոցներ	Մանրէային, այդ թվում ԲՄՊՎ (բացառությամբ տուբերկուլոզի)	30 վայրկյան	Շփում

	Տուբերկուլոզ (M.terrae)	1,5 թուպե	
	Վիրուսային	1 թուպե	
Հիվանդի խնամքի պարագաներ (ռետին, ապակի, պլաստմաս)	Մանրէային (բացառությամբ ԲՄՊՎ և տուբերկուլոզի), սնկային (Կանդիդա)	15 վայրկյան	Շփում, ընկղմում, ոռոգում
	Տուբերկուլոզ (M.terrae)	1,5 թուպե	
	Սնկային (դերմատոֆիտներ)	30 վայրկյան	
Լաբորատոր անոթներ (ապակի, ռետին)	Մանրէային (բացառությամբ ԲՄՊՎ և տուբերկուլոզի), սնկային (Կանդիդա, դերմատոֆիտներ)	30 վայրկյան	Շփում, ընկղմում
Իսաղալիք (մետաղ, պլաստմաս, ռետին)	Մանրէային (բացառությամբ ԲՄՊՎ և տուբերկուլոզի), սնկային (Կանդիդա)	15 վայրկյան	Շփում, ոռոգում
	Տուբերկուլոզ (M.terrae)	1,5 թուպե	Շփում, ընկղմում, ոռոգում
	Սնկային (դերմատոֆիտներ)	30 վայրկյան	Շփում, ոռոգում
Մաքրման պարագաներ	Մանրէային, այդ թվում, ԲՄՊՎ (բացառությամբ տուբերկուլոզի)	30 վայրկյան	Շփում, ոռոգում
	Տուբերկուլոզ (M.terrae)	1,5 թուպե	Շփում, ընկղմում, ոռոգում

Սանիտարատեխնիկական սարքավորում	Մանրէային, այդ թվում, ԲՄՊՎ (բացառությամբ տուբերկուլոզի), Սնկային (Կանդիդա, դերմատոֆիտներ)	30 վայրկյան	Շփում, ոռոգում
	Տուբերկուլոզ (M.terrae)	1,5 րոպե	
Կոշիկ (ռետին, պլաստմաս, կաշի)	Սնկային (դերմատոֆիտներ)	30 վայրկյան	Շփում, ոռոգում

Աղյուսակ 2

**Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով կանխարգելիչ ախտահանման ժամանակ**

Ախտահանման օբյեկտ	Ախտահանման ժամանակ	Ախտահանման եղանակ
Ոչ մեծ մակերեսով մակերևույթներ, սենքերում օբյեկտներ, կոշտ գույք, սարքեր, սարքավորումներ և այլն՝ ըստ սույն հրահանգի 6-րդ կետի	15 վայրկյան	Շփում, ոռոգում

**3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

22. Միջոցով աշխատել չի թույլատրվում ալերգիկ հիվանդություններ ունեցող, քիմիական նյութերի նկատմամբ զգայուն անձանց, երեխաներին:
23. Միջոցն օգտագործել միայն ըստ նշանակության:
24. Միջոցը չօգտագործել պիտանելիության ժամկետի սպառվելուց հետո:
25. Միջոցը դյուրավառ հեղուկ է, հրդեհավտանգ: Կիրառելու ժամանակ չծխել, միջոցը չօգտագործել ջերմության աղբյուրի և կրակի մոտ:

26. Միջոցը պահել սերտ փակ փաթեթավորմամբ, բաց կրակից և տաքացուցիչ սարքերից հեռու, դեղերից և սննդամթերքից առանձին, երեխաների և կենդանիների համար անհասանելի տեղերում:

27. Նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում կարող են առաջանալ սուր թունավորման երևույթներ, որոնք բնորոշվում են քնկոտության և գլխապտույտի, հոգնածության, շնչառական օրգանների, աչքերի, մաշկի գրգռվածության նշաններով:

28. Պահպանել միջոցի ծախսի, մակերևույթների մշակման մակերեսների և կիրառման ընդհանուր ալգորիթմի վերաբերյալ բոլոր առաջարկները:

29. Թույլ չտալ միջոցն ընկնի սննդամթերքի, մթերային հումքի և լրծաթաղանթների վրա:

#### **4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

30. Միջոցն աչքերի մեջ լցվելու դեպքում անմիջապես դրանք լվանալ ջրի շիթով 10-15 րոպե և կաթացնել նատրիումի սուլֆացիլի 30%-ոց լուծույթ: Անհրաժեշտության դեպքում դիմել ակնաբույժի:

31. Բերանի մեջ միջոցի պատահական լցվելու դեպքում անմիջապես ողողել այն մեծ քանակությամբ ջրով: Պատահական կուլ տալու ժամանակ խմել մի քանի բաժակ ջուր և փսխում առաջացնել: Այնուհետև խմել ակտիվացված ածուխ (1 հաբ ածուխ տուժածի յուրաքանչյուր 10 կգ քաշին հաշվարկով): Դիմել բժշկի:

32. Շնչառական օրգանների (քոր կոկորդում, քթի մեջ, հազ, դժվարացած շնչառություն, հեղձուկ) կամ աչքերի (ծակծկոց, արցունքահոսություն) գրգռման ժամանակ դադարեցնել աշխատանքը միջոցով և դուրս գալ մաքուր օդի կամ լավ օդափոխվող սենք: Բերանը և քիթը մաքանը ողողել ջրով, խմել կաթ: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

#### **5. ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀՈՒՄ**

33. Միջոցի տեղափոխում թույլատրվում է +30°C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, տրանսպորտի բոլոր տեսակներով (բացառությամբ օդային), տրանսպորտի կոնկրետ տեսակի համար գործող և միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող բեռների

տեղափոխման կանոններին համապատասխան: Միջոցը զգայուն չէ ցածր ջերմաստիճանների նկատմամբ (չի սառչում):

34. Միջոցը պահվում է արտադրողի փակ բնօրինակ փաթեթավորմամբ ծածկ ունեցող, չոր, օդափոխվող սենքերում, տաքացուցիչ սարքերից առնվազն 1 մ հեռավորությամբ, պաշտպանված խոնավությունից և արևի ուղիղ ճառագայթներից, +30°C-ից ոչ բարձր ջերմաստիճանում:

35. Վթարային իրավիճակում միջոցի թափվելու ժամանակ օգտագործել պաշտպանիչ հագուստ, ճտքակոշիկ և անհատական պաշտպանության միջոցներ. շնչառական օրգանների համար՝ հակագազային շնչադիմակներ РПГ-67 կամ РУ-60М տեսակի «А» մակնիշի պատրոնով, աչքերի համար՝ հերմետիկ ակնոց, ձեռքերի մաշկի համար՝ ռետինե ձեռնոց: Թափված միջոցի հավաքման ժամանակ այն աղսորբում են հեղուկը պահող ոչ դյուրավառ նյութերով (սիլիկագել, ավազ), հավաքում և ուղարկում օգտահանման: Մնացորդները լվանում են մեծ քանակությամբ ջրով: Կոյուղու մեջ պատրաստուկը թույլատրվում է լցնել միայն առնվազն 4 անգամ նոսրացված վիճակում:

36. Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ. չնոսրացված միջոցը չլցնել մակերեսային կամ ստորգետնյա ջրերի և կոյուղու մեջ:

## **6. ՖԻԶԻԿԱԼ - ՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**

### **ՄԵԹՈԴՆԵՐ**

37. Ըստ որակի ցուցանիշների, միջոցը համապատասխանում է ТУ 20.20.14-038-46842767-2019 պահանջներին, սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված ցուցանիշներին և նորմաներին:

Աղյուսակ 3

### **Միջոցի որակի գնահատման նորմատիվ ցուցանիշներ**

№	Նորմատիվ ցուցանիշներ	Նորմա
1	Արտաքին տեսք, գույն, հոտ	Թափանցիկ, համասեռ, ներկված կամ չներկված հեղուկ սպիրտի և/կամ բուրանյութի յուրահատուկ հոտով

2	Միջոցի խտություն 20°C ջերմաստիճանում, գ/սմ <sup>3</sup>	0,855 ± 0,005
3	Իզոպրորպիլ սպիրտի զանգվածային բաժին, %	70,0 ± 2,0
4	Ունդեցիլամիդոպրոպիլ- տրիմոնիում մետոսուլֆատի զանգվածային բաժին, %	0,23 ± 0,03
5	Ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժին, %	0,10 ± 0,02
6	2-ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժին, %	0,30 ± 0,03